

ԱՄՄԷԼԱՔԸ

Ամանորը կամ Նոր տարին հայերը կոչեր են նաեւ կաղանդ: Այս բառէն է կաղանջէքը, որ կը նշանակէ կաղանդի առթիւ տրուած նուէր: Կաղանջէքի հասկացողութիւնը կու գայ թերեւս Եդեմական պարտէզէն: Որպէս Նոր դարաշրջանի սկիզբ մեր նախահայրը ամէն ինչ որպէս նուէր ստացաւ. թէ՛ կեանքը, թէ՛ միտքը, թէ՛ ընտանիքը: Եդեմական պարտէզին մէջ ծառ մը կար՝ Կենաց (կեանքի) ծառը, որ վաղ թէ ուշ պիտի ճաշակէր Ադամը: Բայց ան նախընտրեց ուրիշ ծառ՝ իմաստութեան ծառը: Այդ ընտրութեամբ ալ կենաց ծառը դարձաւ ամենամատչելի եւ երանելի բաղձանք մարդկութեան համար: Մարդկութիւնը բոլոր ժամանակներուն մէջ երազեր է այդ ծառին մասին: Ամանորի տօնածառը մէկ փոքրիկ յուշ է այն նուիրական ծառին, որ կորսւցնուց մարդկութիւնը: Այս պատճառով է, որ քրիստոնեայ երկիրներուն մէջ այս ծառը կոչուեր է նաեւ Ծննդեան ծառ: Ծննդեան օրերուն երբ նոր տարի մը կը բացուի մեր առջեւ, մենք ցանկութիւնը կ'ունենանք նորէն վերագտնել այդ կորսուած ծառը՝ կենաց ծառը: Խորհրդաւորաբար ծննդեան ծառը կապուեր է կենդանի կենաց ծառին՝ Յիսուս Քրիստոսի հետ: Այսինքն՝ Եդեմական պարտէզի կենաց ծառը Ամանորի տօներուն նոյն է ծննդեան կենդանի ծառի՝ Յիսուս Քրիստոսի հետ: Եւ ինչպէս մոզերը իրենց ընծաները բերին Մանուկին առջեւ, այդպէս ալ մենք կը ձգտինք մեր ընծաները բերել Կենդանի ծառին՝ զարդարելով տօնածառը:

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud,
P.O.Box 80810 - Tel/Fax:01-258300 - facebook-ի էջ jerak Ծրագր թերթ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

**ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
ԵՐԵՔՇԱԲԹԻ ԳԻՇԵՐՈՒԱՆ
ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ
ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ
ՔՆՆԱՐԿՈՒՄ**

Կազմակերպութեամբ Կրօնական ժողովին եւ Ազգային առաջնորդարանի «ԱՅՈ» երիտասարդական յանձնախումբին, ամէն երեքշաբթի գիշեր, ժամը 7:00-8:00, Պուրճ Համուտի Ս. Վարդանանց եկեղեցւոյ մէջ, սուրբ պատարագ պիտի մատուցուի:

Սուրբ պատարագը պիտի երգէ հաւատացեալ ժողովուրդը: Հոգեւոր խորհրդածուծիւն պիտի կատարէ Լիբանանի Հայոց առաջնորդ՝ Գերշ. Տ. Նարեկ Արքեպիսկոպոս:

Նաեւ, ամէն երեքշաբթի գիշեր, ժամը 8:00-9:00, Ազգային առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան – Եռագոյն» սրահին մէջ, Արժ. Տ. Ղեւոնդ քհն. Լոշխաճեան Աստուածաշունչի սերտողութիւն պիտի կատարէ մեր ժողովուրդի գաւազներուն համար:

Միտելի ընթերցող, ՃՐԱԳ թերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»-ը, կարդալու կամ անդամագրուելու համար:



ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ՍԱՏՈՒՄԾԱՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ
Ես. 41.4-14: Եբր. 7.11-25
ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՂՈՒԿԱՍ 19.12-28

**ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ
(19.12-28)**

Մինչ ժողովուրդը անոր ըսածները մտիկ կ'ընէր, Յիսուս իր խօսքը շարունակեց, եւ Երուսաղէմի մօտեցած ըլլալով ու գիտնալով, որ ժողովուրդը կը կարծէ, թէ Աստուծոյ արքայութիւնը շուտով պիտի յայտնուի, հետեւեալ առակը պատմեց անոնց.
«Ազնուական մարդ մը կար, որ հեռաւոր երկիր մը գնաց, որպէսզի թագաւորական իշխանութիւն առնէ եւ իր երկիրը վերադառնայ: Նախքան մեկնիլը, կանչեց իր տասը ծառաները եւ իւրաքանչիւրին հարիւր արծաթ դահեկան տուաւ եւ ըսաւ. «Շահարկեցէ՛ք այս դրամը մինչեւ վերադարձա՛մ»: Բայց իր քաղաքացիները կ'ատէին զինք. հետեւաբար պատգամաւոր դրկեցին իր ետեւէն, ըսելով. «Չենք ուզեր, որ ան մեր վրայ թագաւոր դառնայ»: Երբ որ ազնուականը թագաւորական իշխանութիւնը առաւ եւ վերադարձաւ, անմիջապէս կանչեց իր ծառաները, որոնց դրամ տուած էր, գիտնալու համար թէ ի՛նչ շահած են: Առաջինը եկաւ եւ ըսաւ. «Տէ՛ր, մէկ տուածիդ դէմ տասը շահեցայ»: Տէրը ըսաւ. «Ապրի՛ս, բարի ծառայ, քանի այդ փոքրիկ բանին մէջ հաւատարիմ գտնուեցար, ահա քեզի տասը քաղաքներու վրայ կառավարիչ կը նշանակեմ»: Երկրորդ ծառան ալ եկաւ եւ ըսաւ. «Մէկ տուածիդ դէմ հինգ շահեցայ»: Տէրը ըսաւ. «Քեզի ալ հինգ քաղաքներու վրայ կառավարիչ կը նշանակեմ»: Երրորդը եկաւ եւ ըսաւ. «Տէ՛ր, ահաւասիկ տուած դրամդ, գայն պահեցի թաշկինակի մը մէջ ծրարած: Կը վախճայի քեզմէ, որովհետեւ խիստ մարդ մըն ես: Կ'առնես ինչ՝ որ քու կը չէ եւ կը հնձես ինչ՝ որ չես սերմանած»: Տէրը անոր ըսաւ. «Չա՛ր ծառայ, քու խօսքովդ քեզ պիտի դատեմ: Քանի գիտէիր, որ կ'առնեմ ինչ՝ որ իմս չէ եւ կը հնձեմ ինչ՝ որ չեմ սերմանած, ինչո՞ւ ուրեմն դրամս սեղանաւորներուն չտուիր, քանի գիտէիր նաեւ թէ վերադարձիս գայն տոկոսով միասին պիտի պահանջէի»: Ապա սպասաւորներուն ըսաւ. «Առէ՛ք իրմէ դրամը եւ տարէ՛ք տուէ՛ք անոր՝ որ տասնապատիկը շահած է»: Անոնք ըսին. «Տէ՛ր, անիկա արդէն տասնապատիկը շահած է»: Անոնք ըսին. «Տէ՛ր, անիկա արդէն տասնապատիկը ունի»: «Գիտցէ՛ք», - ըսաւ ան, - «ունեցողին աւելիով պիտի տրուի, իսկ չունեցողէն պիտի առնուի նոյնիսկ իր ունեցած ամենէն փոքր բաժինն ալ: Իսկ իմ թշնամիներս, որոնք չէին ուզեր, որ իրենց թագաւոր ըլլամ, հոս բերէ՛ք եւ իմ ներկայութեանս սպաննեցէ՛ք զանոնք»: Այս խօսքերը ըսելէ ետք Յիսուս շարունակեց իր նամբան դէպի Երուսաղէմ:

ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ԳԻՐՔԵՐ
ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿՆԵՐ

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԷՆ
(41.4-14)

Այսպէս կ'ըսէ Տէրը.
«Ո՞վ ըրաւ, ո՞վ իրականացուց այս բոլորը, ո՞վ որոշեց պատմութեան ընթացքը, եթէ ոչ ես՝ Տէրս, որ անոր սկիզբը դրի եւ գայն կը դեկավարեմ մինչեւ գալի՛ք յաւիտեանը:

Հեթանոսները զիս տեսան եւ վախցան, հեռաւոր ազգեր իրենց սարսափէն մօտեցան, իրարու բով եկան:

Արհեստաւորներ որպէս ընկեր ու եղբայր զիրար փաշտեցին, հիւսնը ոսկերիչին օգնեց, ձուլագործը՝ դարբինին:

Իրարու ըսին. "Լաւ եղաւ այս օգնութիւնը", եւ կուռքերը իրենց տեղը գամեցին, ամրացուցին այնպէս՝ որ չշարժին:

Բայց դո՛ւն, իսրայէլ, դուն իմ ծառաս ես, ո՛վ Յակոբ, ե՛ս քեզ ընտրեցի, ո՛վ սերունդ Աբրահամի՝ զոր սիրեցի: Քեզ աշխարհի չորս ծագերէն բերի, աշխարհի հեռաւոր անկիւններէն քեզ կանչեցի, ըսելով. "Իմ ծառաս ես դուն": Չլքեցի քեզ, որովհետեւ իմ ընտրածս ես դուն: Հետեւաբար մի՛ վախնար, ոս հետոյ եմ. մի՛ շփոթիր, բու Տէր Աստուածդ եմ ես: Պիտի գորացնեմ քեզ, պիտի օգնեմ քեզի եւ իմ աշուս պիտի պահպանեմ եւ արդարացնեմ քեզ: Ահա բու բոլոր հակառակորդներդ պիտի ամչնան ու գլուխնին կախեն, իսկ քեզ ամբաստանողները պիտի կորսուին ու չքանան: Պիտի փնտոնես բայց պիտի չգտնես անոնք, որ քեզի թշնամութիւն ըրին, պիտի չգտնեն, գոյութենէ պիտի դադրին քեզի դէմ պատերազմողները: Որովհետեւ ես՝ բու Տէր Աստուածդ, բու ձեռքդ բռնած եմ եւ քեզի կ'ըսեմ. «Մի՛ վախնար, պիտի օգնեմ քեզի»:



ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ
ԵՔՐԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐՈՒԱԾ
ՆԱՄԱԿԷՆ
(7. 11-25)

Գիտենք, թէ դեւտացիներու փահանայութիւնն էր հիմը սրբութեան այն օրթնքին, որ Իսրայէլի ժողովուրդին տրուեցաւ: Արդ, եթէ կարելի ըլլար այդ փահանայութեան միջոցաւ կատարելութեան հասնիլ, Աստուած ի՞նչ պէտք պիտի ունենար նոր փահանայապետ մը տալու Մելքիսեդեկի օրինակով եւ ո՛չ Ահարոնի փահանայութեան շարունակութենէն: Միւս կողմէ, փահանայութեան փոխուելուն հետ սրբութեան օրէնքն ալ պէտք էր փոխուէր, որովհետեւ Քրիստոս, որուն մասին կը խօսուի, կը պատկանէր ուրիշ ցեղի մը, որուն անդամներէն ո՛չ ոք փահանայութեան պաշտօնը ստանձնեց երբեւիցէ: Արդ, յայտնի է, թէ մեր Տէրը Յուդայի ցեղէն էր, մինչդեռ այդ ցեղէն գալի՛ք փահանայութեան մը մասին Մովսէս սեւէ բան չըսաւ: Փոփոխութիւնը աւելի բացորոշ է անով, որ կը յայտնուի փահանայ մը, որ Մելքիսեդեկի նման է, այսինքն՝ մարմնաւոր կեանքի յատուկ օրէնքներու եւ կարգերու համաձայն չէ՛ որ փահանայ եղած է, այլ՝ յաւիտեանական կեանքի մէջ ի գորու եղող օրէնքով:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԷՆ

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՄՐԲՈՑ ՈՐԴԻՈՑՆ ՈՐՈՏՄԱՆ
ՅԱԿՈԲԱՅ ԱՌԱՔԵԼՈՅՆ ԵՒ
ՅՈՂՅԱՆՆՈՒ ԱՒԵՏԱՐԱՆՉԻՆ

Յակոբոս Առաքեալ
Չեբեղիոսի եւ Սողոմէի որդին՝ Յակոբոս, իր եղբօրը Յովհաննէսի եւ Պետրոսի հետ կը կազմէին այն սեղմ շրջանակը, որու աւելիով կը վստահէր Քրիստոս:

Յակոբոս եւ Յովհաննէս իրենց ըմբոստ նկարագիրին համար Քրիստոսի կողմէ կոչուեցան «Որդիք Որոտման»:

Յակոբոս առաքեալի նահատակութեան կ'անդրադառնայ միայն Գործք Առաքելոց գիրքը, երբ կը պատմէ թէ Հերովդէս ձերբակալելով կը գլխատէ գայն շուրջ 99 թուականին, Երուսաղէմի մէջ:

Յակոբոս կը հանդիսանայ առաջին նահատակը առաքեալներու խումբին: Աւանդութիւնը կ'ըսէ, թէ իր մարմինը կը նետուի Եաֆայի ծովը եւ ալիքները գայն կը հանեն Սպանիոյ ծովեզերքը, ուր մեծ ժողովրդականութիւն կ'ունենայ: Իսկ անոր գլուխը կը տարուի Յակոբոս Տեառնեղբայր առաքեալին, որ կը թաղէ գայն իր պարտեզին մէջ, որու վրայ ապագային կը կառուցուի Երուսաղէմի հայոց Ս. Յակոբեանց հիանալի եկեղեցին:

Յովհաննէս Առաքեալ
Առաքեալներու դասին մէջ ամենէն կրտսեր եւ ամենէն երկար ապրող առաքեալն է Յովհաննէս, որ նաեւ ճանչցուած է «Միրելի Աշակերտ» անունով:

Յովհաննէս եւ իր եղբայրը՝ Յակոբոս, Քրիստոսի կողմէ կը կանչուին երբ ձկնորսութեամբ կը զբաղէին: Ան Քրիստոսի երեքամեայ առաքելութեան ընթացքին ամենասիրելի անձը կ'ըլլայ Տիրոջ, եւ նոյնիսկ երբ մատնութեան ժամանակ միւս աշակերտները վախնալով կը լքեն գերիստոս եւ կը փախչին, Յովհաննէս կը հետեւի Անոր հասնելով մինչեւ Գողգոթա, ուր իր սիրոյն առ ի գնահատանք, Յիսուս Մարիամ Աստուածածին կոյսը կը յանձնէ Յովհաննէսի խնամքին եւ այդպիսով կ'աւանդէ Իր հոգին:

Յովհաննէս առաքեալ նաեւ ծանօթ է իր անունը կրող սքանչելի ատարանով՝ «Աւետարան Ըստ Յովհաննոյ»: Ան իր առաքելութիւնը կը շարունակէ Եփեսոսի մէջ եւ ապա աքսորեալ կը տարուի Պաքմոս կղզի, ուր կ'ունենայ իր յայտնութիւնները, որոնք ամփոփուած են «Յայտնութիւն Յովհաննոյ» գիրքին մէջ: Ունի նաեւ երկու ընդհանրական նամակներ, ուր կը խօսի կեղծ վարդապետութիւններէն զգուշանալու մասին եւ կը թելադրէ կեանքը ապրիլ ճշմարտութեամբ ու սիրով:

Յովհաննէս առաքեալ բնական մահով կը մեռնի 95 տարեկանին, շուրջ 100 թուականին Քրիստոսի:

-Չեր լոյսը թող այնպէ՛ս շողայ մարդոց առջեւ, որ անոնք ձեր բարի գործերը տեսնեն եւ փառաւորեն ձեր Հայրը, որ երկինքին մէջ է (Մատթէոս 5.16):
-Խնդրեցէք Աստուծո՛վ եւ պիտի տայ ձեզի. փնտռեցէք եւ պիտի գտնէք. բարեցէք եւ պիտի բացուի ձեզի (Մտթ. 7.7):